դողում են և անդոր են, չեն կարող տաքանալ:

Ազահ ու փողորմելի խմբերով նրանք նետում են դեպի
խարույկները: Անհամբերությամբ յերազում են զոհաբերության
յենթակա կենդանու արունը, վորովհետեւ տաք արյունը,— զա-
րնքը կյանքն և, զա մարմինն եւ: Գոյավիճակն այնքան ան-
հուսալի յեւ, այնքան մթնաշաղ և ու գաֆան, վոր ստովածա-
ծնունդ հերոս, «արքա» Ախիլլը, համաձայն կլիներ աշխարհիս
ուժեղներից և մեծատուններից արհամարված մի խեղճ ու սովո-
րական բանվոր գառնալ, յեթե միայն այդ գնով հնարավոր և
վերադառնալ աշխարհ:

Դեկիրի և հրեշտակների մտսին գոյություն ունեցող սովո-
րական պատկերացուները բացարձակապես կապված են քա-
րայրային թաղումներին: Քարայրը մտնելիս՝ ոկում են
թուշել և թուրաւ, անհայտ և թի վորտեղից ողոկ յեկած չղջկ-
եերը, սեվ, թաղանթավթոր թեզիրով, ճիշտ այնպիսի թեզիրով,
վորպիսին յենթագրվում եւ, մոր գեզիրն ունիս: Քրիստոնեական
սատանայի բոլոր մշուս պատկանալիքները վերցրած են հին
հուսական տառվածներից-սատափիրներից, որինակ, այծի վոտքերը,
բուրդը, յեղջյուրները, ականջների ձեզը: Հին կրոնական հավատ-
քների աստվածները ընդհանրապես վեր են ածվում մութ և չար-
ույժերի, յերբ վոր փոխազրվում են հետազ կրօնների մեջ:
Քարայրի մուտքի առջևի շողում եւ արեվը, նրա լույսի և ճառա-
գայթների տակ, ժայռերի կարնիզների և խորշերի վրա միշտ

են աղավեթեներ: Աղավեթին սրբազան թռչուն և՝ միջերկրական
ծովի շուրջը գտնվող աւիական հնագույն յերկրներում: Յեվ նրա
թեվերը անցըել են քրիստոնեյական հրեշտակին, վորը միաժա-
մանակ իր եյության մի քանի գծերը փոխ և առել հին հունա-
կան՝ Ամուրս-սիրային աստվածությունից, սակայն վերածվել և
ավելի անժամանական մի արարածի:

Թաղումները լիանային բարձունքներում: «Ծերունիների»
կացարանները—այնտեղ են, բարձրում, ամպերից վեր, վորեկի
Սինայի կամ Վոլիմպոսի գագաթին, յերկնքում, արեգակնային
մշտնջենական շողերում: Սակայն ճանապարհը զժվար և կ վտան-
գավոր—գետի այդ լուսաշող թագավորությունը: Սխալական մի
քայլ և հանգուցյալը (կամ նրա հոգին) թոշում և դեպի «ան-
գունդը», զաժան խորխորածները, վարտեղ յերբեք արեվ չի
ընկառում և վորտեղ նրան սպասում են «իավարի վողիները»:
Դյուրին չե առաջ շարժվել այդ նեղ շավիղներով, յերերուն
կամուրչներով, վոր այս ու այն տեղ ձգված են վիճերի վրա:

Թաղումները ջուրը նետելու կամ նավակի միջոցով՝ վորը
դիակի հետ միասին, սժութած բոլոր նյութերով յերկար ճամ-
բորդություն կատարելու համար ազատ ծովն և մզկում: Նախ-
նական մարդը շատ պարզ և նկարագրում իրական հարաբերու-
թյունները և պարզ և արտացոլում իր գիտակցության մեջ
«գոյության» ձևինը, յերբ նա ասում է թե ննջեցյալները ի-
րանց յերկիրն են համառում հաղթահարելով լայնարձակ ջրերն
ու մեծ գետերը: Խակ հետագայում, յեթե կակսեն ննջեցյալներին
ճամբար գնել ատանց նավակների, հարկավոր կզա և վորեկի մի
նարոն, վոր այդ սավիրները պետք և ափը հանի մեռյալների
թագավորության յեղերքներին: Յեվ այդ յերկիրն ընկած և գե-
տի, ծովի և ովկյանոսի «այն կողմը»:

Թաղումները ծառերի փշակներում, ծառերի վրա, պուրակ-
ներում: Դիակի սարսափը խճճվում և հանգուցյալի սարսափին,
խել յերբ ժամանակի ընթացքում հանգուցյալը յերկուանում և,
գասնում և մարմինը թողած մի վագի, այդ սարսափը
վեր և ածգում նայելի «ուրվակ անների» կամ «վողիների» սարսա-
փի: Առավել յեվս լարված և գասնում նա զիշերները, յերբ տե-
սողությունը, — տպավորությունների այդ ամենասուր ընդունո-
վը, — այլյեվս հրաժարվում և ծառայել և համենայն զեպմ՝ դառ-
նում և անվատահելի և խարուսիկ: Ահա թե ինչու մարդիկ հա-
վատառ են, թե իբր բոլոր մութ ու չար ուժերը դուրս են դա-

լիս իրանց գործին միայն դիշերները, մանավանդ կես գիշերին՝ ամենամռւթ ժամանակ։ Յեվ նույն այդ պատճառով վայրենիները՝ և վոչ միայն նրանք, այլ և ժամանակակից մարդկանցից շատերը, այսպես կոչված «բարձր կուլտուրային» մարդիկ, վորոնք «կրթված» են անվանում իրանց, գիշեր ժամանակներն աշխատում են վորքան կարելի յև հեռու պահել իրանց գերեզմանոցներից։ Այն պուրակի մռայից, վարտեղ թաղված են նրա նախնիքը, վայրենին անցնում ե միայն ցերեկը, յերբ նա վողողված է արելի լույսով, յերբ այնտեղ յերգում և թափում են թաշունները, յերբ այնտեղ ծաղիկներն են բուրում և արելի շողերի տակ հաղար գույներով պտուղներն են խաղում։ Պարտեզն առանձնատպես ճոխ ու փարթամ և թվում, վորովհետեւ ամբողջ այդ պուրակի վրա գրգում և այսպես կոչված «թարու»-ն, այսքան արգելը՝ տրամադրելով այդին և նրա բոլոր պտուղները հանգուցալներին։ Դա այն յերկրային գրախան և, վոր ներկայացրում ե վորպես շքեղ ու փարթամ մի այգի։

Յեվ այսպես, «նախնիքը», այսինքն նրանք, վոր ապրել են առաջ, «ձերունիները», նրանք, վորոնցից սկիզբն և առել ավշալ ցեղը, — «ցեղապետները»—վորտեղ են նրանք։ Տարբեր կլինեն պատասխանները, կախումն ունենալով թաղման ձեվերից, — ժայռում, քարայրում, «քարում», վորովհետեւ սարը հաճախ «քար» և կոչվում, — ծառերի վրա, յերկնային բարձունքներում, պարտեզում, «ջրով լի մեծ փոսում» (լիճ կամ ծով), գետերում, «ջրից այն կողմը»... և այլն։ Այս պատասխանները բնավ արդյունք չեն վօրելի բարդ կամ խորամանկամիտ յեղրակացությունների։ Նրանք պարզապես արտահայտում են «այն, ինչ վոր կա»։ Յեվ այս պատասխանները բնավ չեն նշանակում, թե քարայրում, զետնի տակ կամ լիճ մեջ հայրերի վոսկորներ են գըտնվում և վոչ ել այն, թե այն հայրերը, վոր մեսել են՝ այլցելս գագարել են ապրելուց։ Վոչ։ Նրանք հաստատում են միայն, վոր մի ժամանակ մեզ հետ ապրող «հայրերը» այժմ գտնվում են «ջրով լիքը մեծ փոսի մեջ», ծառի մեջ, քարի մեջ։ Այդ նրանց սովորական և ժշտական բնակավայրն եւ։ Յեվ ի՞նչ կարելի յետու այդ պնդման դեմ։ Յեվ վերջապես ի՞նչպես պիտի առարկելինք՝ մենք՝ նկատի առնելով նախնական լիզվի աղքատությունը, վոր զիս սովոր չե նրբություններն արտահայտել, վորովհետեւ նման որինակ առընդերումները վոչ մի վործնական նշանակություն չպիտի ունենային խմբի համար և վոչ մի հե-

նակետ չպիտի ունենային նրա մշտական փորձի համար։

Սակայն յեթե «ծերունիները», «նախահայրերը» գտնվում են քարայրում, ծառի վրա, լճում, քարի մեջ, լեռնային բարձունքներում, ապա ուրեմն իր ժամանակ, անհիշատակիլի գարերում, վորպեսի հնոր լիներ յերեվալ յերկրի յերեսին և ծնունդ ու սկիզբն տալ իր ցեղին («մարզու ստեղծագործությունը»), — նրանք պետք ե գուրսու գային քարայրից, գետնի տակից, ծառերից, քարերից, լեռներից և պիտի իշնչյին յերկնքից։ Այսպիսով մենք զայիս և հասնում ենք բազմաթիվ առաջնակելիքների սկզբնաղբյուրներին՝ այն մասին, թե ինչպես են ստեղծվել առաջին մարդիկ և կամ ինչպես են սառչ յեկել նրանց աստվածակերպ «ցեղապետները»։ Յեվ այստեղ ել մենք բացատրություն ենք ստանում, թե ինչպես կարող յերին ծագել այսպես կոչված «տոհմանշանները», վորոնք միաժամանակ այդ խմբերի «սկզբնանիքների», «նախայայրերի» կերպավորումն եյին նշանակում, որինակի համար, այսպիսի տոսեմներ, — քար, քարայր, լիճ, յերկինք և այլն։

Նույն այդ ուղղությամբ պետք ե վարոնել և պատասխանն այն հարցի, թե ինչն որինակ, կոկորդիլոսը սրբազն մի կենդանի գարձավ հին ցեղիպատացիների համար։ Հնագույն բացատրությունները, թե նախնանկան մարզը սրբազն եր համարում կոկորդիլոսին (կամ գայլին, արջին, առյուծին, վազրին, արծվին և այլն), վորովհետեւ նա «սարսափելի» յե «հերեշավոր» և, — ակներել կերպով վոչինչ չարժեն։ Նմանապես վոչ մի արժեք չունի և այն բացազրությունը, թե մարզը ինքն իր մեջ հողի գտնելով խկույն յեթ վորոշեց, վոր վայրի կենդանիներն ել հոգի ունեն։ Մնում ե այնուամենայնիվ այն հարցը, թե ինչն որի կոկորդիլոսի հոգին նման յեղալ վոչ թե կոկորդիլոսի, այլ մարզու հոգուն, — սակայն ավելի իմաստուն և ուժեղ, քան մարզկայինը։ Ակներել և, վոր յեղել են այնպիսի հանգամանքներ, վորոնք և իրականում արգեն մերձեցրել են կոկորդիլոսին և մարզուն։ Թույլատրելով միավորել նրանց մի կերպում։ Դժվար չե ըմբռնել, թե ինչումն ե բանը։

Բավական բնորոշ և, վոր յեզիպատացիների համար հանգեցյալ թագավորությունը զանգում եր ջրավին տարածությունից այն կողմը նրանց զարգացման մեջ յեղել և մի ժամանակ, յերբ նրանք իրանց մեսելներին թաղելիս են յեղել՝ ջուրը նետելով նրանց զիտկները։ Իսկ ջրում այդ զիտկները կոկորդիլոսների

Գեր հն դարձել, վորոնք այդպիսով ծերունիների «Գերեզմանների» յեն վերածվել։ Վորտեղ և նախնին։ Նա կոկորդիլոսի մեջնեւ է, նշանակում է յերբեմն նա գուրս և յեկել կոկորդիլոսից, վորպեսզի սկիզբն տա իր ցեղին և ուսուցանի նրան զանազան գիտելիքների և արվեստների։ Դուրս և յեկել կոկորդիլոսից։ Նա կոկորդիլոս և յեղել։ Նա նման է կոկորդիլոսի։ Կոկորդիլոսից և սկսել խումբը, վորի մտապատկերների մեջ իր նախանախնին ապրելիս և յեղել կոկորդիլոսի մեջ։ Յեկ ուրեմն դարձյալ հեշտ չեւ առարկելը այս հաստատումներին, վորոնց հիմքում զրված և այն անվիճակի փաստը, վար ծերունին, իրոք, գտնվում է կոկորդիլոսի մեջ, սկսած այն բողեյից, յերք կոկորդիլոսը նրան կուլ տվեց։

Հենց այս ուղղությամբ ել հարկավոր եր բացատրությունը փնտրել և այնպիսի կենդանիների կուլտի, կամ այնպիսի տուամբների հարգանքի՝ ինչպիսիք են առյօւծը, վազրը, շունը, արծիվը և այլն։ «Ազնվազարմ», «աղնվածին», «արքայական» թոշուն արծիվը, ինչպես նա համարվում է այժմ—ըստ եյության—լեռակեր և, վորովհետեւ մեծավ մասամբ այդ և նրա կերըն ու սնունդը։ Հետեվագես, բարձրունքներում կատարած թաղումների ժամանակի, արծիվը գառնում եր հանգուցյալի «գերեզման», նրա «վերջին հանգստյան» վայրը—նրա մկանների, ներքին որգանների և ուղեղի համար։ Այդ դեպքում շատ հասկանալի յե, թե ինչո՞ւ վոլիմպոսի վրա բնակվող Զեվսի թռչունն արծիվը դարձավ։ Զեվսի վերջնական կերպը—արդյունք և յերկարատեւվ զարգացման, նրա մեջ միավորված են շատ բարդ և մասամբ ել շատ խայտարգետ տարրեր։ Սակայն այդ տարրերի թվում կար և պատկերացումն նրա վորպես նախանոր, մարդկանց նախանախնիքի և վորպիս այդ նախանայը հարկավոր եր յերբեմն արծիվը։ Յեկ միամիայն հետագա պատկերացումների համար, այդ նախանայը՝ մի ամբողջ ցեղի կոմ մի քանի ցեղերի աստվածը գառնալով ընդունեց մարդկային կերպարանք, սակայն իր կողքին պահեց և արծիվն, վորպես հիշեցնողի իր սկզբնական կերպարանքի մտախ։

Այսպես կոչված—նոր ուխտի զրքերում մեղավորներին հատկացվում է «խորին խավարը» և բացի այդ՝ նայել «գեհնեական հուրը»։ «Խորին խավարը», զա—նույնն ե, ինչ վոր հին հույների Սիրը, խարայելացիների Շեռլը։ Ինչ վերաբերում է հուրիքատող և բոցավառ դժուքին, պետք և յենթագրել, վոր այդ պատկերա-

յութերը ծնունդ են առել «հրաշունչ» լեռների, կամ հրաբուխների մասին լսելուց, կամ անմիջական կերպով նրանց տեսնեհուց և նրանց միջից հեղեղացող, յեռացող հոսանքները դիտելուց լետու Յեթե հանգուցյալները գետնի տակն են և յեթե այնտեղ այդքան տաք և և կրակ ե բղխում այնտեղից,—նշանակում ե, վոր հանգուցյալներն այրվում են կրակի մեջ։

Հնարավոր ե, վոր նմանորինակ հավատքի հիմքը յեղել և ավելի ուշ հետագայում զարգացած և հոգու մասին ավելի մըշշակված հասկացողությունները յենթադրող—դիակների այրման սովորությունը։ Հանգուցյալների այրումը գործադրված և միմիայն կուլտուրական բավական բարձր աստիճաններում, վորովհետեւ վառելիքի նախապատրաստումն արդեն, վորն անհրաժեշտ և նմանորինակ թաղման համար,—գերազանցում ե նախնական մարդու տեխնիքական հնարավորությունները։

VII

Մարդկային աշխատանքի արտադրական ուժի զարգացումը մղում եր վոչ միայն զեպի բնակչության խորացման ուժեղացումն, այլ և զեպի աճող մերձեցումն խմբերի միջեվ։ Ծնունդ եր առնում փոխարկական հարաբերությունների բարդ ցանցը և փոչյակաս բարդ ազգակցական հարաբերությունների ցանցը։ Համայնական նեղ և սահմանափակ կապերը ընդլայնվում և վերածվում եյին հասարակական ավելի լայն կապերի և լրացվում եյին նրանցով։ Կազմվում եյին բաղաքական միավորումներ, վորոնք արդին զուրս եյին արևակցական կամ ցեղակցական կազմակերպություններից։ Այնուհետեւ նոր, —զարգացման ավելի բարձրը աստիճանների վրա, նույն յերեվույթը նորից կրկնվում եր։ Տնտեսական և քաղաքական միավորումն առաջ եր գնում ընդլայնվող շրջանակներով։ տոհմական խմբերից—զեպի այսպես կոչված «ցեղը», «ցեղերից»—զեպի «ազգությունները» և զեպի սկզբնական «պետությունը»։

Տնտեսապես կապվում, քաղաքականապես՝ փոխենթարկվում, եսկ միասին վերցրած—ավելի և ավելի սերտ հարաբերությունների մեջ եյին մասում իրար հետ այնպիսի խմբակները, վորոնց գաղափարախոսության մեջ շերտավորվել եր ընալ վոչ միատեսակ և վոչ միեվնույն փորձը։ Միավորվում եյին մերձավոնյա և ցամաքային բնակիչները, լեռնաբնակներն ու հովտանակները, գեոյեզս սողմային խաշնաբածները և նույնքան սաղմնային ձըկ-

Նորմաները, հախինական յերկրագործները և նախնական վորոսքները, Տեղի յեր ունենում հարստացումն մտապատկերների, հայցքների, լեզվի—տռաջին անգամն եր սկսում ստեղծվել քիչ թե շատ զարգացած ընդհանուր լեզուն, իսկ նրա հետ միասին տեղի յեր ունենում և միավորումն գաղափարախոսուկան տարբեր տարբերի:

Միավորվում եյին և կրոնական մտապատկերները, — միավորվում եյին զարմանալի դյուրությամբ, վորովնետել նրանց մեջ ըստ եյության, գեռ սկզբներից լինալատար նույնությունն կար: Տարբերվում եյին նրանք լոկ վորոշ մասնավորություններով, գուցն իրանց կուլտի առարկու զարձած նախնիների անուններով և տեղային գունավորությամբ: Տնտեսական զարգացման աստիճանի նույնության հետեւանքով, խմբերի կրոնական հավատքների տարբերությունը հաղիկ թե սրանից ել ավելի լիներ:

Սակայն հայցքների միավորումն, ընդհարելով նրանց, առիթ եր տալիս և ներքին հակասությունների և կտարյալ անհամաձայնության: Ո՞ւր են հախնիները՝ նրանք գետնի տակ են, խավարում, ցրտում: Սակայն նրանք և ամպերից վեր են, լուսաշողված են արեվի հավերժական ճառագայթներով: Նրանք հավերժորեն տան ջվում են խավարի, ցրտի և սպիր ցավերից: Սակայն նրանք և վայելքներ են ապրում շքեղ պարտեզներում, վորոնք առատ են այն բոլոր նյութերով, վոր կարող են զարդարել մարդկային կյանքը: Նրանք, — յեթե ոգտագործենք արդի զարգացած տերմինաբանությունը, — դժոխքումն են, բայց միաժամանակ՝ նրանք և զբախումն են, և գետնի տակ են, և յերկնքում:

Ինչպես հաշտեցնել այս հակասությունները, ինչպես անել, վոր հասրավոր լինի վորեվի համաձայնություն մտցնել այս, թը-փում և թե, կատարելապես և բացարձակ անհամաձայնության մեջ:

Սակայն այս հակասությունները գոյություն ունեն լոկ մեղ համուր: Նույն այն զարգացման պրոցեսը, վորը ծնունդ եր տիեզ այդ հակասություններին, սա յել հեշտացնում և վերացումն եր այդ բոլորը: Նույն այն սոցիալական ույժերը, վորոնք ընդհարելով բազմակերպ աշխարհայացքներ այսպիսով մերկացնում եյին նրանց ներքին անհամաձայնությունը, — միաժամանակ տալիս եյին նրանց և սոցիալական համաձայնեցումն և հաշտեցում:

Տոհմական կամ ցեղային խմբերի միջիկ փոխանակության

զարգացման համար արդեն անհրաժեշտ եր, վոր գոյություն ունենար ժարդկային աշխատանքի արտադրողականության վորոշ զարգացումն: Խոկ այս, իր հերթին պահանջում և վոչ միայն տեխնիկայի զարգացումն, այլ և անքակտելիյորեն նրան կապված կուտակումն յուրատեսակ լեզեպտաների, նշանների, սովորույթների, զիառավագունների՝ թե նյութերի հատկությունների, անդեկությունների, թե նրանց հետեւողականության, կապի, թե բը-նության յլրեվույթների պարբերականության և թե այն միջոցների մասին, գորոնցով համատեսել և ոգտագործել այդ յերեվույթները: Յնք անա խմբի կազմից սկսում են կամաց-կամաց առանձնանալ վհուկը, հեքիմը, ավագազույնը, կազմակերպիչը, արտադրական գործունեյության դեկավարը, բուրությունը նշանների և սովորույթների պահպանողը և նրա գերազանցությունը խմբի սոսկական, շարքային անգամների համեմատությամբ:

Արտադրական աշխատանքի հետագա աճեցողությունը հընարավոր և դարձնում ալիքի յեփու սերտ հարարերություններ ստեղծել խմբերի միջեզ և միաժամանակ կապված լինելով սաղմային ատեխնոլոգիայի» և «դիտության» ընդպարձակմանը՝ պայմանավորում և կազմակերպչական գործնեյության և ավելի բարձր աստիճանների: զարգացումն:

Առավելապես արագընթաց և այդ զարգացումն այն պարագաներում, յերբ արտադրական աշխատանքը զուրս գալով վորհվել խմբի սահմաններից՝ կարգավորումն և պահանջում: Այդպես և, որինակը, այն գեղքը, յերբ անհրաժեշտ և յերերազորդական նըպատակներով հանրային ոգտագործումն գետի վարարությունների: Այսուեղ չափազանց կարեվոր և քիչ թե շատ ստույգ կերպով նախատեսեն վարարությի ժամանակը, նախապարագաները, այն ամենը, ինչ անհրաժեշտ և ջուրը հավասարապես բաժանելուն թե դաշտերին և թե պաշտերին պահեստանիրին: Այդ հողի վրա զարգացել և քուրմերի իշխանությունը և ծնունդ են առել համեմատաբար ընդպարձակ և կայուն քաղաքական միավորությունները Յեղիպատում, Միջազնություն, Զինաստանում (Նեղոսի, Տիգրիսի, Յեփրատի, Դոանգոյի, — Դանգեսի և Յանցեկիագի վարարությունները): Սակայն այդպես են և ամենահասարակ զեպքերը, յերբ անհրաժեշտ և, որինակի համար, սահմանագծել հարեվան համայնքների ոգտագործման ներքո գտնվող արոտատեղիները և հողերը: Խոկ յեթե միացյալ ույժերով վորսազնացություն և կազմակերպ-

վում և կամ նախաձեռնվում են ռազմական արշավանք, ապա ամեն մի խմբի ղեկավարից զատ ընտրվում է և մեկ ընդհանուր հրամանատար, վորին և հանձնվում է ռազմական ընդհանուր կազմակերպությունը:

Այսպես և ծագում, աճում և խորանում կազմակերպչական և կատարողական աշխատանքի բաժանումն, Դա սկիզբն և հասարակության դասակարգային շերտավորման, նրա բաժանումն—շահագործողների և շահագործվողների: Ժամանակի ընթացքում շահագործողները սկսում են ավելի և ավելի բաժին յուրացնել հավելյալ ավարից, մթերքից, նյութից, պարզապես քանի գնում, այնքան ավելի հարստանում են, իշխանությունը կրողներ են զարնում, վորոնց հակադրված և մնում նրանց յինթակաների, անիշխանների և չքափոր հողագործների աճող և բազմացող մասսան: Արտադրական խաղաղ աշխատունքի կազմակերպիչները երբեմ առանձնանում են՝ հատուկ խմբակ կազմելով—և նրանցը բարձրագուն կատեգորիան և քրմական դասը: Իսկ ռազմական գործի կազմակերպիչները վերածվում են՝ զինվորական դասի պարագությունների, ազնվականների և փոքրիկ թագավորների: Սակայն լինում է և այնպես, վոր խաղաղ—արտադրական հարաբերությունների բնույթ կրող մի վորեվի կազմակերպություն ձուլվում և ռազմակազմակերպչական գործունեյության՝ կենտրոնական միջնորդուն:

Կազմակերպիչները՝ ավագները, առաջնորդները, զինվորականները, շումունները, քանանաները, քուրմերը, խմբավարները, հեքիմները, բուժքները,—իրանց հասույթներով և ունեցվածքով ամեն կերպ աշխատում են տարբերվել յերբեմնի միավորված ցեղային խմբի կազմից և իրաք, հասնում են իրանց նպատակին: Ցեղային խումբը բաժանվում և առանձին ընտանիքների:

Ունենուների հարստությունները ոպտագործվում են հսկուտանուցյալների:

Ժառանգորդը չե մոռանում իր հանգուցյալ ծնողներին: Ամեն որ իր կերած—խմածից բաժին և հանում նրանց համար, հետեւապես, հանդերձյալ աշխարհում նրանց համար ուտելիքներու բան կա: Նրանք չեն նիհարում, չեն մահանում, նրանք մնում են թե կենդանի և թե աշխատանքի ընդունակ: Նրանք հովանափորում են իրանց մասին հոգատար ժառանգորդին:—բազմացնում են նրա անասուններն ու նրա ստրուկները, ռազմական որհնություններին նրանց ընդունում նրա դենքին, ավելացնում են

նրա ստանալիք հարկերը, վոր նա գանձում և իրան յենթակա հարեւաններից, լցնում են նրա ամբարները, նկուղները և շահմարանները:

Յերբ կմահանա և այս ժառանգը, նրա հաջորդները շքեղ հոգենաց կկազմակերպեն, վորակով վոչ մի պակասություն չի լինի՝ վոչ խոշոր և վոչ մանր անասունների, վոչ լուչունների և վոչ ել ծիսակատարությունների: Վորպես ուղեկիցներ՝ նրանք այն աշխարհը կուղարկեն նրա հետ միասին նայել մի քանի ստրուկներ և գերիներ, վորոնք պիտի սպանվեն կոմ գուցե և այրվեն նրա զիակի հետ միասին: Մի քանի զինվորներ, վորոնք պիտի մահանան տուրնիբների, զինախաղերի միջոցին (միջնադարյան տուրնիբների արմատը—նենց այդ թաղման սովորությունների մեջ է), մի քանի, կամ գուցե և նենց նրա բոլոր կանանց: Նրան կտան զենքեր և ռազմական ամրող սպառազինությունը: Կոժտեն նրան այն բոլոր նյութերով, վորոնք անհրաժեշտ են նրան զժվարին և հեռավոր ճամբորդության համար.—Կտան նրան ձի, նավակ, սահնակ, թանգարժեք իրեր և զգեստներ:

Նշանակում է, վոր հենց սկզբից նա վոտք և դնում այն աշխարհը վորպես հզոր մի արարած, վորի ույժն ու զորությունը ավելի յեփս ընդգծվում և ուռածանում է՝ նրա հետ միասին թաղված շքախմբի, անասունների և գանձերի ուժերով: Սակայն այս ել զես բավուկան չե: Այն աշխարհում նրան կղիմավորեն բարի կամեցող նախնիները, վորոնք պահպանել են իրանց ուժը՝ շնորհիվ այն հոգատարության, վոր նա ցույց է տվել իր կյանքի որերին: Վորպես շնորհակալության արտահայտություն այն բոլորի համար, վոր նա հազեցրել ե նրանց զոհաբերած կենդանիների արյունով, կերակրել ե նրանց հացով ու մսով, քաղցրացրել ե գինով և պտուղներով, —նրանք կղիմավորեն նրան և կառաջնորդեն այն զժվարին և վասնագավոր ճանապարհներով, վոր իրանք արդեն փորձել են և գիտեն: Նրանք կնախապգուշացներն կեղծ կամուրջներից, անփորձ կանցկացնեն չոր վոգիներից, վորոնք ավանորեն իրանց վորսին են սպասում: Կհայտնեն նրան կտնիսապես նախապատրաստվող զարանակալ հարձակումների մասին, կհայտնեն նրան նայել այն հմայնքները, վորոնցով չար վոգիներին պետք ե հեռացնել: Չեն շփոթվի լեռնային խճաված և վոլորապատույտ շավիզներում և ցույց կտան այն վայրերը, վորակով կարելի յե հանգիստ առնել: Դըժվարին պայմաններում կան և անհրաժեշտ փրկության այլ միջոց-

ներ. Հար վոդիներին կարելի յե շնորհել ստրուկներից մեկին, կամ մի այծ, կամ զգեստների և զարդարանքների մի մասը: Իսկ այն զահարերումները, վոր դեռ յեկա շարունակվում են յերկրի յերեսին, կենդանի մնացած ազգականների կողմից, նրանց նվիրած այժմերը, յեզները, վոչխարները, թոշունները, նրանց արյունը ճարպը, հացը, զինին, պտուղներն ու արմատները նորից և նորից կամրապնդեն հանգուցյալի ուժերը՝ ճանապարհի մնացորդ մասը յեկա հաղթահարելու համար: Այսպես հորտավախճանն իր ամբողջ շքախմբով և հարստություններով կհասնի վերին բարձրունքները, մինչեվ ամենալարձր յերկինքը և կակսի իր յերանյալ կյանքը: Այստեղ նա զգրափի ճիշտ նույն տեղն ու դիրքը, վորպիսին նա գրավում եր յերկրում:

Պարզ ե, վոր գրախտը գոյություն ունի միայն հարուստ ների և ազնվականների համար:

Բոլորովին այլ և շահագործված մի չքափորի, ստրուկի կամ շարքային մի վորեվի ընտանիքի անդամի մահվան գործը:

Այզպիսի ընտանիքների հանգուցյաների կյանքը շատ դժվար է, կենդանի մնացած ընտանիքի անդամները հազիվ հաղ են պահում իրանց զլուխները: Ել մուր մնաց, վոր բաժին հանեն հանգուցյալին, վժրտեղից ճարել նրա համար սնունդ ու խըսք: Դեռ մահվանից հետո առաջին որերը նրան ճիշում են, ոջախի կրակի միջ մի քանի կտոր հացի փշրանք են զցում, յեթե միայն այգափիսի ընտանիքն ունի իր սեփական ոջախը, կամ վորեվի խմչփից մի քանի կաթիլ կաթեցնում են նույն կրակի վրա, վրապ սղի այզպիսով զեթ փոքր ինչ կենդանություն տան նրան և զորացնեն նրա ուժերը: Իսկ այնուհետեւ, — և այն ել շատ շուտով, առորյա ծանր հոգսերի ճնշման տակ իսպառ մոռնում են իրանց հանգուցյաներին:

Յեկ քարշ են տալիս նրանք իրանց վողորմելի գոյությունը, բոլորից թողնված և քանի գնում ավելի և ավելի յեն հյուծվում ու մաշվում: Նրանք հաղիվ են կարողանում շարժիել, նրանք միշտ գտնվում են ցուրտ ու քաղցած կիսաքնություն դաժոն վիճակում: Յեկ նրանք անդոր են պաշտպանվելու շար վոդիներից, վորոնք իրանց գոյությունը պահպանում են միմիայն հանգուցյաներին խմուկով: Սակայն այդ մինչնույն ե, վարօնքների հենց վոր կենդանի մնացածները նրանց մասին մոռնում են: Նրանք իսկույն այն վարոյականությանը, վոր ընդհանուր և հատուկ ե իր շահագործող հակումներն ու հարստությունները:

շատ կասկածելի յե, թե նա այնպիսի հոգի ունենա, վորը շարունակի իր կյանքը մարմնի մահից հետո:

Մի նոր անդամ և մահանում նույն աղքատ ընտանիքից: Աղքատիկ և նրան ճանապարհ գցելու պրոցեսը: Յեթե արդեն լիակատար կերպով և կատարվել զինվորական դասի շերտավորումն, ապա այդ հանգուցյալին վոչ մի զենք չեն տա և նա ստիպված է լինելու այն աշխարհում ել, ինչպես և այս կյանքում առաջ շարժվել մենակ, անոգնական և անպաշտպան՝ թշնամական հարձակումների հանդեպ: Նույնքան աղքատիկ են լինելու և նրա սննդապաշտըները: — մի վորեվի աղավնի, կամ նիհարած հավ, մի բուռը հատիկ, կամ մի քանի ձռւ և մի քիչ գինի՝ բավական ջրախառն: Հաղիվ թե զրանով յերկար ապրես Յեկ կանա հոգին անհայտ ճանապարհներով՝ սարսափահար, ճընշված, քաղցանար և թույլ: Յեկ վոչ վոք նրան չի դիմավորի և չի գտնի նա վաշ մի բարեկամ ու զեփար: Սնունդի բացակայությունից չի վոր կործանվել են նրա բոլոր ազգականները, իսկ ուժեղ ոտարներից նրան վոչ վոք չի ճանաչում, չի հիշում, կամ հենց ուրազապես չի ել ուզում նկատել այզպիսի փոքր ու անսնշան միջատին: Յեկ այսպես հենց սկզբից նա շփոթվելու և մոլորվելու յե: Վրա յե զալիս շար վոգին՝ և պիտի զողա ու սայթաքի նրա վոտքը՝ և պիտի ընկնի նա անզունդը՝ կեր ու բաժին դաստակ դաժան դժոխքին:

Դժոխքը աղքատների համար է: Դա հատուցումն և չքափության մեղքի, «հանդերձյալ» աշխարհի մոռացության և իրանց պարտականությունները զեպի հանգուցյալը չկատարելու: Դա հատուցումն և այն մեղքի, վր չքափորներն իրանց բոլոր հոգ ուղղում են այս աշխարհում իրանց «յերկրային կյանքը» բարեկալուն և աչքաթող են անում հանդերձյալ կյանքը:

Նախնական մորդու մի քանի պատմազիրները բոլորովին իրներ են ասում, թե իրը՝ «ետիքական», բարօյական կրանը»— իր՝ բարի և չար գործերի հատուցմամբ՝ ծնունդ և առել մարդկային կուլտուրայի բոլոր ստափճաններում և իրը թե ետիկական մոմինաները բնավ բացակայում են հանդերձյալ կյանքի վայրենի և բարբարոսական մտա կատկերներում: Այդ ճշմարիտ և լոկ այն չափով, ինչ չափով նախնական հասարակության կուպիտ և միամիտ ետիկան և բարօյականությունը վոչ մի առընչություն չունին այն բարօյականությանը, վոր ընդհանուր և հատուկ ե իր շահագործող հակումներն ու հարստությունների

Փաստը սքողող և թագցնող հասարակության մեջ ապրող քաղաքակիրթ պատմագիրներին: Բարձր կրօններում ետիկան ավելի շատ չէ, քան նախնական կրօններում: Միայն ետիկական հասարակությունների բովանդակությունը այլ է:

Հին հունաստանի և Հռոմի կրօններում նման ետիկական հասկացողությունները «ապագա կյանքի» մասին չաջողեցին իրանց զարգացման մեջ. — չափազանց սրնթաց թափով և թըսկէներով եր առաջ գնում այստեղ տնտեսական զարգացումը նրան ուղեկցող շերտավորումներով: Սակայն՝ և այնտեղ սկսել եյն արդեն մշակել «հանգերձյալ կյանքի» մտապատկերները, վորպես հատուցումն այս աշխարհում կատարած գործերի և արարքների:

VII.

Միայն հարուստներն ու նշանավորները նախնիներ ունին: Թեյև նրանք արդեն մեռել են դեռեկտ մի քանի սերունդ առաջ, այնուամենայնիվ նրանք զեռ կենցանի չեն, վորովհետեվ սնունդ ու նվիրաբերություններ են ստանում իրանց ցեղի և ընտանիքից: Ըստ վերջին հասկացողությունների տոհմական մարդը նա յե, ով կարող է ասել, վոր իր անցյալում ունի մի քանի սերունդ այնպիսի նախնիների, վորոնք իր նման պարագիտական և շահագործող կյանք են վարել: Սակայն տոհմականության սկզբնական նշանացույցը կայանում է նրանում, վոր շահագործողների ընտանիքը նախնիքը չի մեռնում, վորովհետեվ նրանց ընտանիքը յերեք անսնունդ և աննվեր և թողնում նրանց:

Թաղաքավարության առաջին աստիճանների և նույնիսկ ֆեոդականության բարձրագույն աստիճանների համար միյեվնույն նշանակությունն ունին՝ ինչ հարստությունը և ինչ ականավորությունը: Նրանց բաժանումն ու տարբերումն սկսվեց լոկ այն ժամանակից, յերբ առեվտրական վաստակը վերածվեց շահագործական հասույթի ինքնուրույն մի աղբյուրի՝ ֆեոդալական ըենտային հավասար կերպով, այսինքն՝ յերբ վաճառականների դասն սկսեց անջատվել ֆեոդալներից:

Կուլտուրայի պատմագիրները և իդյալիստական ֆիլիսոփաները բոլորովին իզուր և ապարդյուն եյին գլուխները կուրում անսահության զարգափարի վրա: Այստեղ նրանք բավականաշափ հիմարություններ են առել նրա աղբյուրն այնքան պարզ են, զնիտ և, անմիջական են բնական, վորքան և նախ-

նական բոլոր պատկերացումներն ու հարաբերությունները: Սակայն, նա այդպես և մնում լոկ մինչեվ այն ժամանակ, քանի մենք, մեր քաղաքակրթված գիտակցությամբ և բարոյականությամբ և քաղաքակիրթ մեր սովորություններով հանդեպ կեղծավորություն չենք սկսում խելքներիս զու տալ այդ հարաբերությունների վրա և ըստ մեր գաղափարների գունավորում նրանց:

Առանց սնունդի բոլոր արարածներն ել կործանվում են: Սնունդը յերկար ժամանակ պահպանում և ույժերն ու կյանքը նշանակում ե նրանք, վոր սննդի առատ պաշտոներ ունեն և բարեպաշտորեն բաժին են հանում իրանց հանգուցյաների համար, — կարող են համոզված լինել, վոր իրանց նախնիքը դեռ ապրում են և ապրելու յին այնքան ժամանակ, քանի գոյություն ունի նրանց ցեղն ու ընտանիքը նախնիքը կործանվում են ընտանիքի հետ միասին, ընտանիքը կործանվում ե նախնիքների հետ: «Յերկրային» կյանքը «Ետիքապես» կապվում և «յերկնային» գոյությանը: Յեվ այդպես և առավել յեվս այն պատճառով, վոր ընտանիքի կորուստը կարող է հատուցումն լինել նախնիքներին մոռացության տալու պատճառով, վորպես հետեւանք այն հանգամանքի, վոր նախնիքները յերես դարձրին իրանց ցեղից, կամ ընտանիքից, իսկ հետո իրանք ել այնքան թուլացան, վոր այլյեվս անկարող եյին ոգնել նրան, յեթե նույն կանկություն լիներ:

Ընդհակառակը, — չքավորը, դա — «անեռիմ ու անցեղ» մի արարած ե: Գուցե յերբեմն նա գեռ, հիշում եր հանգուցյալ ծնողներին: Սակայն պապերին ու նախապապերին նա այլյեվս վոչինչ չի զոհաբերում: Նրանք վերջնականապես մեռած են վոչ միայն «այս», այլյեվ «այն» կյանքի համար:

Մենք չարչար սխալված կիննեյինք, յերբ յենթագրեյինք, թե նախնական մարդը կամ այժմյան վայրենին թագավորական հարստության (Ճիառտյ) որինակով պահում են իրանց տոհմականության ցուցակը. — հայտնի յե, վոր նրանք բոլորն ել, դըրանց թվում և Ռոմանովները, և Հարստուրգները, և Հոհենցոլները իր ժամանակին հեռավոր նախնիքներ եյին հսարում իրանց անցյալում, վորպեսզի այսպիսով իրանց տոհմը կապեն «Հռովմեյական Ոզոստոս կայսերը», կամ թե՝ զժվար և յենթագրել, վոր այդ վայրենական ցեղերն իրանց տոհմականությունը պահեյին չիսուսի համար կազմած Ավետարանի որինակով. — «Արքահամ ծնի իսահակ, իսահակ ծնի Հակովը և այլն՝ մինչեվ

Հյուսն Հովսեփը, թեյեվ այս վերջինիս անհրաժեշտ եր հանգիստ թողնել, վորովհետեւ նա վոչ մի մասնակցություն չի ունեցել Հիսուսի ծննդյանը։ Հիշողությունը լավ և պահպանում ծնողների կերպն ու դեմքը, ավելի թույլ են մնում հիշողության մեջ պատկերը և, գուցե պահպանվում ե, սակայն շատ մշուշափոր կերպով—նախապապերինը։ Դրանից այն կողմը բոլորովին ջնջվում են նախնիների բոլոր անհատական առանձնահատկությունները և հատուկ անունները և հեռավոր բոլոր նախնիքը ձուլվում են իրար՝ առաջ բերելով մեկ «Մեծ ծերունու» կամ «Ավագ նախնիքի» առասպելական դեմքը, —մի վորեվե արեգի, կողարդիլոսի, բանանի ձեկով, վորն յերեխն աշխարհ և իջել, սկիզբն և գրել եր ցեղին, տոհմին և սովորեցրել ե նրան իր գիտեցած զանազան արվեստներն ու գիտելիքները։ Յեվ հեռավոր նախնիքներին մատուցված բոլոր զոհարերությունները ձուլվում են իրար՝ վերածվելով մի ընդհանուր զոհարերություն՝ «Մեծ ծերունու» հասցեյին։ Նա ապրում է, վորովհետեւ յերեք չի մնում առանց զոհարերության և առանց մնունդի։

Իր յերկրպագուների և հարգողների համար նա դառնում է մի աստված, վոր սկիզբն և տվել մարդկանց և կառուցել և այս աշխարհը։ Սակայն և նա ապրում է այնքան, վորքան հիշում են նրան նրա հարգողները և ոժանդակում են նրան նոր և նոր զոհամատուցումներով։

Յահու (Յեհովան) խանդոսությամբ պատվիրում և իր յերկրպագուներին։ —ուրիշ աստված չպաշտեք, յերկրպագեցք միայն ինձ և միայն ինձ մատուցեք ձեր զոհարերությունները։ Յեվ նա հոգատարությամբ մատնացույց և անում, թե ինչ կենդանիներ և ինչ թոշուններ և կենդանիների վեր մասերն են նրան առանձնապես հաճելի։

Սակայն, հին հրեայական հավատքների համաձայն, նույն այդ Յեհովան ել ապրելու յե այնքան ժամանակ, վորքան տեղիու յեն այդ զոհարերումները։ Ըստ սկիզբնական հավատքների նա անմահ չեւ նա կմեռնի իր ժողովրդի հետ միասին, նա կմոռացվի, յերբ կործանեն նրա տաճարն ու զոհասեղանը և ցրիվ ու անապատան կանեն նրա ժողովուրդը։ Այդ ժողովրդի անկումը ցույց կտա, վոր այլ ժողովուրդների աստվածներն ավելի ուժեղ են, քան Յեհովան։ Նրան կարող են կործանել ճիշտ այնպես, ինչպես նա ինքը կործանել և մասվականների, ամոնականների և փղտափակների աստվածներին։

Բարելոնյան գիտության շրջանում հրեյաները ծանր ու զաժան վողբերգություն ապրեցին։ Ուրեմն՝ ինչ Յեթե կործանվեն նրանք, վորպես ազգ և պետություն, նշանակում ե՝ պիտի կործանվի և նրանց աստվածը։ Այդպիսու Ուրեմն նրանք այլեվս յերեք չեն կարող ասել, «Կենդանի յե աստվածն իսրայելի»։ Յեվ միայն այդ շրջանումն եր, վոր Յահույի (Յեհովայի) քուրմերի և մարգարեների միացյալ աշխատանքով ու ջանքերով հրեյաների ազգային աստվածը վերածնվեց «համայն աշխարհի» մի աստծու, այսինքն՝ բոլոր տեղերի և ժողովուրդների, այսինքն՝ մի աստծու, վորին յերկրպագողներն իր ժամանակին կհպատակեցնեն յերկրագնդի բոլոր ժողովուրդներին և նրանց յեվս կրտիպեն զոհարերություններ կատարել հրեյական Յահու աստծուն։

Նշանակում է, վոր անմահ աստծու գաղափարը ծնունդ ե տաել այն հավատից, թե միմիայն այդ աստվածը, իր ժողովրդի հետ միասին, հաղթանակ կտանի բոլոր հակառակուրդների գըլիին և թե զոհարերումները նրա հասցեյին անսպառ կմնան համարյան հավիտենից։

Յերբ վորեվ մի խմբակ—ցեղային մի համայնք, կամ հնագուրյան մի «ցեղ» և այլն իր գերիշխանության ներքո միավորում և նոր և նոր ուրիշ խմբակներ, վորոշ ինքնուրույնություն իրավունքներ վերապահելով նրանց՝ ապա այդ միացրած խմբակների նախնիք—աստվածները, յենթարկվում են զերիշխող խմբի նախնիք—աստծուն։ Նրանց սկսում են համարել զիխավոր աստծու տղաներ կամ ազիկներ, կրտսեր յեղբայրներ կամ քույրեր և այլն Ստեղծվում են մեծ քանակությամբ առասպելներ և ավանդություններ, վորոնք այդպիսով բացարում են, վոր քաղաքական միավորված այդ բոլոր խմբակները աղդակից են իրար, վորովհետեւվ նրանց ցեղապեանները, նրանց կյանք տվող նախնիք—աստվածները իրանց հերթին ծնունդ են առել միության գլխավոր աստծուց։ Տեղային, ընտանեկան, տոհմական և կամ ցեղային աստվածների տեղային կուլտերին զուգընթաց զարգանում ե մի նոր, ընդհանուր աստծու «աղդային» կուլտ, վոր վոչ այլ ինչ և յեթե վոչ բոլոր միավորված խմբերի զիխավոր աստծու, ուրիշ խոսքով՝ զերիշխոր խմբի նախնիք աստծու կուլտը նրա համար ամենուրեմ վողջակիզումներ և խնկարկումներ են կառուցվում։ Նրա համար ամենուրեմ վողջակիզումներ և խնկարկումներ են կատարվում, նշանակում ե, վոր այսուհետեւ նա գու

յություն ունի այլեկս վհչ միայն լոկ իր խմբի, այլեւ բոլոր մյուս խմբերի համար, նրանց հետ ել ե, նրանց մեջ ել ե, վորպես իր խմբի գլխավոր հովանավորը և վորպես գերազույն հսկիչ՝ քաղաքականապես միավորված բոլոր այլ խմբերի:

Այսպես և ծնունդ առնում աստծու մասին գոյություն ունեցող մտապատկերների շարքի յերկրորդ վեհաշունչ զաղափարը—ասծու ամենուրեխությունը: Աստված ամեն աել ե, վորտեղ նրան կերակրում են, այսինքն զոհեր են մատուցում: Իսկ հիշյալ աստիճանի վրա նրան կերակրում են «ամբողջ աշխարհում», այսինքն—բոլոր այն վայրերում, վորտեղ տարածվում ենրա խըմբի քաղաքական իշխանությունը և նույնիսկ այնտեղ, վորտեղ վորտք են դնում նրա խմբի անդամները:

Ենք այդ աստվածն արդեն սկսում ե ամենակարող լեզ ամենազոր մի արարած դառնալ: Զե՞ վոր նա մեծ հաշողությամբ հաշիվսերը մաքրեց բոլոր հակառակորդների հետ, նրանցից ուժեղ դուրս յեկավ, յենթարկեց նրանց իրան և տիրեց այն նվիրաբերություններին, վորոնք առաջներում շնորհվում եյին բացառապես նրանց:

Բայց վորպեսզի հնարավոր լինի միաժամանակ ներկա լինել «ամենուրեք» և ամենուրեք ել վայելել մատուցող զոհերը, այդ աստվածը առանձնահատուկ մի արարած պիտի լինի: Նա արդեն մի կարող լոկ «Մեծ ծերունի» լինել վորը լինում ե լոկ բանանի, քարայրի, քարի, կոկորդիլոսի, ապիսի (յեզիլտացիների սրբազն յեզը)՝ վորմպոսի կամ Սինայի վրա: Նա չի կարող լոկ մարմարական, թեկուզ և նուրբ մարմարական արարած լինել Նա վոզի պիտի լինի, վորն անտեսանելի կերպով, խորհրդագովորպես ներկա յե ամենուր, իսկ բանանի, քարի, կոկորդիլոսի, վորմպոսի և Սինայի լերան հետ կապված ե լոկ հատուկ, զգացական միջոցով:

Ահա թե ինչու զարգացման միմիայն բարձրագույն աստիճաններում ե աստված կատարելապես հոգեվոր արարած դառնում: Սակայն այդ ել լոկ փիլիսոփաների խորամանկահույս զատողությունների և վոչ թե կրօնական պրակտիկայի և կրօնական պապույար թեորիայի համար: Սրանց համար նա առաջվան «որերով ծերացած» «Մեծ ծերունի» յե:

Վերածնվելով կատարյալ վոզու, բացարձակապես հոգեվոր մի արարածի՝ աստվածը վերջնականորեն շղարշվում ե միստիքական մշուշներով և կորցնում ե իր ամբողջ իրականությունները:

Եր յերկրային ծագման բոլոր հետքերը: Նրա կապը ոյալ հարաբերություններից այնքան ե խպվում, վոր այն զոհերը, վոր միակն եյին նրա գոյության պահպանության համար, զառնում են ինչ վոր կատարելապես անոյալ, զուտ սիմվոլիկ մի բան, վոր չունի կենաւկան և պրակտիկ և վոչ մի նշանակություն իր՝ աստծու համար—«ամենագործ», «ամենայերանյալ» մի արարածի, մի վոզու, վոր միանգամայն ազատ ու զերծ ե մարմնական վորեվե կուրիքներից:

VIII

Դառնանք այժմ ամենուրեք ամենագործ, ամենայերանելի «Մեծ ծերունուց»—անմահ մի արարածից, վորովհետեւ զարեր կերակրել են նրան և ելի կլի կլի կրեակրեն, թողնենք նրան և դառնանք մահկանացու մարդկանց, նրանց հանդերձյալ կյանքին, նրանց հետմահյա յերանություններին ու տանջանքներին:

Դառնանք այն կրօնին, վոր յելքովական կուլտուրայի տեր մարդկանց կողմից սովորաբար համարվում ե ամենազարդացածը, ամենակատարյալը.—վոչ թե ուրիշ կրօնների հետ զուգընթաց գոյություն ունեցող մի կրօնի, կամ կրօնի, վոր ծագել և մյուսներից, այլ այն միակ կրօնին, վորն արժանի յե այդ անվան և վորովապես բարձր և մյուսներից:

Հարկավ, հենց վոր սկսում ես խոսել քրիստոնեության մասին, իսկույն յելքելի գեմ ես առնում մի շարք պապուլյար մտապատկերների.—ինչ համեմատություն կարող է լինել նրա և այլ կրօնների միջևի: Զե՞ վոր քրիստոնեյությունը,—զոնե իր նախնական շրջանում, —չավորության կրօնն եր, վարտեղ կարող ենք հարուստի և աղքատ շաղարսուի նման մի բան զտնել, կամ թե այսպիսի մի համեմատություն՝ թե «ինչպես ուղարկն գմիքար և մտնել ասեղի ծակով, այնպես ել հարուստին գմիքար և մտնել արքայությունը յերկնից»:

Սրան պետք ե ամենից առաջ պատառխանել այն, վոր քրիստոնեյական առասպելի ծագումը շատ բարդ է: Այնաեղ հըսկայական քանակությամբ բարդ, յերբեմն միանգամայն տարրեր և իրար հակասող մոմենտներ են կուտակված՝ ավելի բարդ և տարբեր, քան Պրոմեթեյոսի առասպելի մեջ: Յեվ իր սոցիալական արմատներով նույնպես նա բնավ այնքան պարզ ու հասարակ չե, ինչպես կարծում են այն մարդիկ, վորոնք քրիստոնեությունը ներկայացնում են, վորպես տանջվածների և ծան-

բարենմավածների կրոն: Բավական նշանակալից և արդեն այս փաստը, վոր պրոֆ. Վիպակերը՝ («Բրիտանիայության ծագումն» գրքում) բուրժուական շատ բարեմիտ մի գիտնական, բավական հիմքեր և զտել ապացուցելու և բնորոշելու համար, վոր նախավաճառն բրիտանիայությունը վոչ այլ ինչ եր, յեթէ վոչ հարուստավունեւրի կրոն:

Մենք հանգիստ կերպով կարող ենք թողնել, վոր քահանան ու աստվածաբանները զտեն «իսկական» Հիսուսի, «իսկական» ուսմունքի «իսկական» իմաստը, Հիսուսի՝ վոր իբր թե գոյություն և ունեցել ապամուռթյան մեջ: Միայն կհիշատակենք, վոր Հիսուսի առասպելը բնավ ներդաշնակված չե իր տարրերում և խաղում ե ծիածանի բոլոր գույնիրով, վարովհետեւ դեռյիվս չե զտել պայքարի «վերջնական» արդյունքները. — զարգանալով, վերաբուժվելով, հարմարվելով, նա եվոլյուցիայի յե յենթարկվել միշտ, ստվայն գեռ չե հասել վերջնական արդյունքների:

Տվյալ գեղգում մեզ համար բավական ե զիմել բրիտանական սովորական պրակտիկային և այսուղ ել սակայն կարելի յե հիշատակել լոկ մի քանի մոմենտներ և փուլանաշնահեր:

Յես կարծում եմ, վոր արդի լուսավորված ընթերցողի հետ հարկ չկա յերկար վիճելու հոչակավոր «ինդուլգենցիաների» («քաղաքությունների») — լայն կերպով զորձադրվող մեղքերի թողության վաճառքի մասին: Ինձ կարող են ասել, թե զա «եքսցես» եր, չարաշանություն ոք, վորն և հետագայում, բողոքական յե կեղծու կողմից արժանացավ պատճի:

Սակայն յես կառաջարկեյի ընթերցողին փոքր ինչ խորհել արդի ուղղափառական յեկեղեցու պրակտիկայի վրա՝ նրա հոգեանդամույան պատարագներով, քառասունքներով, անմարելի կանթեղներով, քահանաներին հյուրասիրելու և պատվելու բազմատեսկ ավանտյուրաններով: Իսկ այնուհետեւ շատ խորհուրդ կը շատակարգերում հանդուցյալին հիշատակելու և նրանց համար զոհաբերումներ կատարելու մասին: Այսուղ պարզ ասված ել նույն իօկ այն մարդիկ, վորոնք մահացու մեղքեր են կատարել վոհարերի հոգեանդամություններով զժոխքից զուրս են բիրվում և վոր չկա այնպիսի մի մեծ մեղք, վորն առատ նվերներով և զորձնել:

Բայց պարզ ե, վոր առատ զոհաբերումներ կարող են կատարել միմիայն այն ժառանգորդները, վոր հարուստ ժառանգություն են ստացել հանգուցյալից հետո: Իսկ ով ե հոգ տանելու աղքատ մեղապարտի մասին, վորն ապրել ե մենակ և մահացել մի վորեվից ցանկապատի տակ:

Պետրոսը բաց և անում զրախտի ժանգոտած և ճռնչացող գոները լոկ նրանց առջեվ, վորոնց համար յերկրում լավ զին և մուծված զրախտում ունենալիք բնակարանի գիմաց:

Սակայն այս մասին յես կարող եմ յերկար չխոսել, վորովհետեւ բավական խոսել եմ այդ ինդրի մասին իմ «Բարեպաշտ մարումների» և «Կրոնական հավատքների» զարգացման ակնարկի» մեջ:


Ամեն մի նոր կրոնը, գոյություն ունեցող կրոնների մեջ կատարվող ամեն մի նոր քայլը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ այն մինհմալ զիջումն ու հարմարեցումն փոփոխվող պայմաններին, առանց վորի կրոնը յերբեք չեր կարող իր գոյությունը պահպանել:

Յեկ քրիտանեյությունը, ինչպես և բոլոր այլ կրոնները, հանգիս և զալիս վճէ իբրեւ մի կրոն, վոր հերքում և իր նսխորդներին, այլ վորպես նրանց հաստատողը:

Առաջ ընթանալով նվազագույն զիջումներով և նվազագույն հարմարեցման ճանապարհով՝ բոլոր կրոններն ել, վորպես ընդդարձակ հիմք իրանց ընդհանուր գրության, պահպանել են բարբարոսի և վայրենու աշխարհայցքը:

Յեկ նրանք շատ բան են պահպանում այդ աշխարհայցք, քանի լայնորեն տարածված են զեռ տեխնիկայի հետամեաց ձեվերը, որինակ. յերկրագործություն մեջ, քանի արտադրական պրոցեսների զիտական ըմբանողությունը զեռ յեկո մի փոքր խումբ մարդկանց բաժինն ե մնում և քանի զեռ հասարակությունը, շահագործման ձեվերի եվոլյուցիայի հետ միասին ել, այնուամենայնիվ զեռ մնում և վորպես շահագործող հասարակությունն:

Միմիայն կօմունիզմի հաղթանակով հասարակությունը կդանա ժարդակային հասարակություն և վերջապես կհաղթահարի բարբարոսին ու վայրենուն, վորի համար քաղաքակիրթ հասարակության — այժմյան քաղաքացիական հասարակության. — քաղաքակիրթ հարաբերություններու համար պահպանական տարերք. . .



Z. U. H. 2.

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. ԶԵՐՎ.



1211

1211

«Ազգային գրադարան



NL0027883

